

*Bridgeport*

27 յունվար 1953

Արժանաշնորհ  
Տ. Ղեւոնդ ԲՆ. Խոսրովեան  
Հովիւ Ս. Համբարձում Հյց. Եկեղեցւոյ  
ի Պրիմիորթ.

Սիրելի Տէր Ղեւոնդ,

Ստացած ենք Ձեր յունվար 24 թուակիր նամակն ու տեղեկագիրը, որով կը հաղորդուի Պրիմիորթի մեր Եկեղեցւոյն տարեկան Միսկան Ժողովին գումարումը եւ անոր կողմէ կատարուած գործերը, ներկայացնելով նաեւ նոյն ժողովի կողմէ կատարուած ամբողջական հոգաբարձական ընտրութեան արդիւնքը եւ եւ խնդրելով ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացումը եւ հաստատումը Կեդրոնական Վարչութեանս կողմէ:

Համաձայն Ձեր տեղեկագրին նկատի առնելով որ ընտրութիւնը կատարուած է կանոնական եղանակաւ եւ ընտրուած անձնաւորութիւնները ծուխիդ եկեղեցասէր եւ անձնուէր անդամներն են եւ պատրաստ են ծառայելու սուրբ Եկեղեցւոյն, կը վաւերացնենք եւ կը հաստատենք անոնց ընտրութիւնը ըստ հետեւեալին.

Տեարք Մուշեղ Բազէեան  
Զարար Թովալեան  
Անդրանիկ Ճեվարճեան  
Կարապետ Քէշիպէյ  
Հէրի Մելիքոնեան

Տեարք Նշան Ճեվարճեան  
Ճան Ստամպոլեան  
Պաղտասար Զարիմեան  
Յովհաննէս Աղամեան

Ձեր ուշադրութեան կը յանձնենք այն պարագան որ այս ընտրուած անձնաւորութիւններէն հինգը պիտի պաշտօնավարեն երկու տարի եւ չիքզը մէկ տարի: Ըստ այսմ զալ տարի պաշտօնէ կը դադրին նուազագոյն քուէ ստացողները եւ չորս անձի նոր ընտրութիւն կը կատարուի: Եւ կամ Կենտրոնի 21րդ յօդուածին համաձայն չորս անձ վիճակաւ կը դադրին, ըստ ժողովիդ որոշման:

Մաղթելով Ձեզ եւ նորընտիր Հոգաբարձութեանդ խաղաղ եւ արդիւնաւէտ գործունէութիւն յօգուտ ս. Եկեղեցւոյ եւ ի փառս Աստուծոյ,

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ աղօթակից

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ